ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 106ԱՄԵԱԿ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԴՈԿՏՈՐ ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

«Հայը Թուրքի Համար Թշնամի է Ու Թշնամի էլ Կը Մնայ, Քանի Դեռ Գոյութիւն Ունի Հայաստանը՝ Մեծ Խոչընդոտ Թուրք Ազգայնական Նպատակների Ճամբին»

Վարեց՝ ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.- Թուրքիան ու Ադրբեջանը շարունակում են հայատեաց կոչերն ու քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ. Ալիեւը Բաքուում բացում է «Ռազմավարի պուրակ»՝ վերահաստատելով իր ցեղասպան քաղաքականութիւնը: Միեւնոյն ժամանակ, Հայաստանի իշխանութիւնները քարոզում են խաղաղասիրութիւն, յայտարարում են, որ հակամարտութիւն այլեւս չկայ, ինչը ենթադրում է ենթակառուցուածքների համատեղ գործածում եւ կայուն ու զարգացող տարածաշրջան: Հայաստանի վարչապետը կրկնում է թուրքական քարոզչութեան այն թէզը, որ չգիտի, թէ որտեղից է սկսուել հայ-թուրքական թշնամանքը, եւ առաջարկում է վերջ դնել այդ թշնամանքին՝ առանց մանրամասնելու, թէ ի՞նչն է համարում հայկական կողմի թշնամանքի դրսեւորում: Մինչդեռ, Թուրքիան թշնամական է համարում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացն ու հայկական պահանջատիրութիւնը: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք հէ հիշխանութիւնների նման պահուածքը, եւ ի՞նչ հետեւանքներ այն կարող է ունենալ Հայաստանի ու Արցախի համար:

*ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Քառասուն չորս օր կռուեցինք, մեր լաւագոյն զաւակներին զոհաբերեցինք՝ անօգնական, առանց պէտք ու պատշաճ ռազմական ենթակառոյցների, առանց ռազմավարական որոշակի ծրագրի, Թուրքի երախն ուղարկեցինք, անպատիւ պարտութեան մատնուած Արցախի ու նոյնիսկ Հայաստանի տարածքները տանուլ տուեցինք, ու հիմա կանգնել հարց ենք տալիս, թէ ո՞վ է թշնամին, որտեղի՞ց եկաւ հայ-թրքական թշնամանքը, ու պէտք է վերջ տալ այդ թշնամանքին: Այո, ստորադասեալ կամակատարը չի կարող իր վերինի հանդէպ թշնամանք տածել, այլ, անկամ ու աննկարագիր, հլու հնազանդ պիտի գործադրի թելադրուածը, վերեւում կայացուած որոշումները: Ո՞ւր է ազգային արժանապատուութիւնը: Արդէն քիչ թէ շատ նոյնն է կատարուել այն ժամանակ, երբ Արեւմուտքի թելադրանքով խումբ խումբ Թուրքիա էին հրաւիրուում, բարեկամութիւններ հաստատում, ու բարեկիրթ Թուրքի վրայ հիացած, հայ-Թուրք յարաբերութեան պատմութիւնից անտեղեակ, կամ՝ կամովին, «մեծահոգաբար» մոռացութեան տուած, կրթական ապազգային սկզբունքներ որդեգրած, ոգեւորութեամբ տուն էին վերադառնում ու լաւ Թուրքի, բարի դրացիի քարոզչութիւնը կատարում, դասագրքեր փոխում՝ Թուրքին չվիրաւորելու համար պէտք է զգուշօրէն մօտենալ պատմութեան եւ գործածուած եզրոյթներին: Իսկ այդ բոլոր «մերձեցումներից» բխած առաջադրանքները Թուրք իշխանութիւնների համար ջրի ձայն էր: Երկրի կրթական քաղաքականութեան մէջ ոչինչ չէր փոխուում. Թուրք քաղաքացին աշակերտական նստարանից սովորում էր ատել հային, որ դաւաճան էր, որ Օսմանեան կայսրութեան Թշնամիների հետ մեղսակցած փորձում էր երկիրը ներսից կործանել: Հայը Թուրքի համար Թշնամի է ու Թշնամի էլ կը մնայ՝ քանի դեռ գոյութիւն ունի Հայաստանը՝ մեծ խոչընդոտ Թուրք ազգայնական նպատակների ճամբին (այն որ գաղափարախօսները Փանթուրքիզմ են անուանում): Որքան կ'ուզէք յետ գնացէք, պատմութիւնը պեղէք: Հայաստանի վարչական լծակներին իշխող նորելուկներ, կարդացէ՛ք Օսմանեան կայսրութեան մէջ կիրառուած միլլեթ սիստեմի մասին: Հայը հաւատարիմ ռայա էր այնքան ժամանակ, որ ենթարկւում էր ու գլուխը կախ տանում ամէն խտրութիւն, կեղեքում ու կողոպուտ: Հայը Թշնամի դարձաւ, երբ փորձեց իր մեղկ համակերպումն ու հնազանդութիւնը թօթափել ու մարդու պէս ապրել: Թշնամի դարձաւ եւ պատժուեց՝ բռնաճնշման ու բնաջնջման քաղաքականութիւն դեռ 1890ականներից սկսած ու մինչեւ այսօր: Իսկ հէնց Թուրք իշխանութիւնների ծնած ու մեծացրած, թաթար թափթփուկներից ձեւաւորուած ազերին ու արհեստականօրէն մէջտեղ հանուած Ադրբեջանը: Որտեղի՞ց եկաւ Թշնամանքը: Եօթանասուն տարի Մոսկուայից հայ-ազերի եղբայրութիւն քարոզուեց, մենք կուլ տուեցինք խայծը, իսկ ազերին շարունակեց իր մեծ եղբօրից սովորածը հալածեց իր հանրապետութիւնում ապրող հային, աստիճանաբար հայաթափեց իր տարածքը, քանդեց, ոչնչացրեց դարերի հայու արարածը, ու դեռ չի բաւարարուել, Զանգեզուրը, Սեւանն ու Երեւանն էլ է իրը համարում: Ահա որտեղից եկաւ Թշնամանքը: Կարելի՞ է վերացնել: Միայն միակողմանի եւ անդադար զիջումներով: Այսօր ո՛չ Թուրքիան, ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Արեւելքն ու ոչ էլ Արեւմուտքը հզօր Հայաստան չեն ցանկանում՝ Հայաստան որ իր ուրոյն ազգային քաղաքականութիւնն ունի, որի զաւակները ազգային դաստիարակութեամբ զինուած՝ արդարութիւն են պահանջում: Եւ դա համարւում է Թշնամա՞նք Թուրքիայի դէմ: Այսօր, իմ կարծիքով, անուանական գոյութիւն է Արցախը, որ ներկայ իրավիճակով չի կարող գոյատեւել, չի կարող ապագայ ունենալ: Այսօր, իմ կարծիքով հիւանդ մարմին է Հայաստանը, ուր տարուող ներկայ քաղաքականութեամբ դէպի կործանում է գնում: Եւ սա, որովհետեւ պատմութիւնից դասեր չքաղեցինք, վերջին պարտութիւնից յետոյ չենք վերընձիւղուել ու շարունակում ենք տուայտել պարտուողական մթնոլորտում, ամէն օր մի քիչ աւելի տեղի տալ ի դէմս մեր «մեծ պաշտպանի» թելադրանքների ու մեր «բարի դրացիների» պահանջների:

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.- Ադրբեջանի նախագահը յայտարարում է Հայաստանի Հանրապետութեան միջազգայնօրէն ճանաչուած տարածքի նկատմամբ իր բացայայտ յաւակնութիւնների մասին՝ նկատի ունենալով Սիւնիքն ու Երեւանը: Ալիեւը, միաժամանակ յայտնում է, որ Զանգեզուրի միջանցքը չի կարող բացուել առանց Թուրք-

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 106ԱՄԵԱԿ

«Հայը Թուրքի Համար Թշնամի է Ու Թշնամի էլ Կը Մնայ, Քանի Դեռ Գոյութիւն Ունի Հայաստանը՝ Մեծ Խոչընդոտ Թուրք Ազգայնական Նպատակների Ճամբին»

իայի համաձայնութեան եւ մասնակցութեան՝ ընդգծելով, որ Թուրքիայի կառավարութիւնը շատ կառուցողական է ծրագրում իր քայլերը եւ դրանք պէտք է համարժէք պատասխան ստանան, այն է՝ Հայաստանն առաջին հերթին պէտք է հրաժարուի Թուրքիայի դէմ տարածքային պահանջներից եւ դա արմատրեն նոր Սահմանադրութեամբ: Սրան ի պատասխան, Հայաստանի Անվտանգութեան խորհրդի քարտուղարը հրաժարւում է Թուրքիային ճանաչել թշնամի, տարածաշրջանի ապաշրջափակման նպատակով առաջարկում է որոշակի շտկումներ կատարել Թուրքիայի նկատմամբ Հայաստանի քաղաքականութեան մէջ, եւ նշում է, որ իրենք այդ ուղղութեամբ աշխատում են: Արդեօք սա չի՞ նշանակում, որ ՀՀ իշխանութիւնները բանակցութիւններ են վարում թշնամու հետ նրանց պայմաններով: Որո՞նք են այսօր մեզ պարտադրուող նախապայմանները: Կապիտուլեացիա՝ անձնատուութիւն, ստորագրած իշխանութիւնը ի՞նչ շահաւէտ գործարք կարող է կնքել Հայաստանի համար այս իրավիճակում:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Տեղին է մտահոգութիւնը, որ մտահոգութիւնն է Հայ ժողովրդի ու Հայաստանի ապագայի մասին մտածող ու ներկայ իրավիճակը մերժող իւրաքանչիւր հայի: Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան եռակողմ համաձայնութեան ծիրում, ուր իր իշխանութիւնների ձախող քաղաքականութեան արդիւնքում որեւէ ասելիք չունեցաւ Հայաստանը, ամէն ինչ սպասելի է: Թուրքիայի համար միշտ գլխացաւանք է եղել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը, ինքն իրեն ապահով չի զգացել խորհրդայինների հետ կնքած համաձայնագրերով՝ ուր Հայաստան-Թուրքիա սահմաններ էին ճշդւում: Այսօր, ուժի դիրքերից, Ալիեւին իր խամաճիկն ու տաքգլուխ հրոսակն ունենալով, փորձում է ամրագրել, նոյնիսկ Հայաստանի սահմանադրութեամբ, այն ինչ չկարողացաւ ԱՄՆի թրքամէտ իշխանութեան ծնած Փրոթոքոլների միջոցով, որին դէմ եկաւ նոյնիսկ Հայաստանի այդ օրերի սահմանադրական դատարանը: Յուսամ, Հայաստանի իշխանութիւնը այդքան կեանք չի ունենայ այսպիսի սեւ նախաձեռնութիւն էլ իր յանցապարտ գործունէութեան սեւ թղթածրարին աւելացնելու: Ե՞րբ է արթնանալու հայ ժողովուրդը՝ իրար դէմ թշնամանք ու ատելութիւն տածելու, իրավիճակի համար մեղաւորներ փնտռելու, նախկինի ու ներկայի սազը նուագելու փոխարէն՝ միակամ ուժով ու վճռականութեամբ կանգնեցնելու գնացքը որ դէպի ձորն է գլորւում:

ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆ.- Անկախանալուց յետոյ, Հայաստանը փորձել է Թուրքիայի հետ յարաբերութիւններ հաստատել հաւասարութեան սկզբունքով, սակայն Թուրքիան մշտապէս նախապայմաններ է առաջադրել ի տարբերութիւն Հայաստանի: Այսօրուայ ՀՀ վարչապետը յայտարարում է, որ քննարկման թեման այն չէ՝ մենք թշնամի ենք, թէ ոչ, այլ, թէ ինչ ենք անելու այդ թշնամանքի հետ, կառավարուելո՞ւ է, թէ՞ անկառավարելի է լինելու, մենք պէտք է այն կառավարենք շատ զգոյշ: Յարաբերութիւնների հաստատման ո՞ր տարբերակն է ընդունելի հայկական կողմի համար:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Իմ յիշողութիւնը չի թելադրում, որ անկախութիւնից յետոյ մեր իշխանութիւնները փորձել են հաւասարութեան սկզբունքով մօտենալ Թուրքիային: Յիշում եմ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ իր պատուիրակութեան բանակցութիւնները, որ իր սաղմի մէջ խեղդուեցին, որովհետեւ արտգործ նախարար Բաֆֆի Յովհաննիսեանը ի հեճուկս Տէր Պետրոսեանի չընդունեց Թուրքիայի պնդումը՝ բանակցել առանց Հայոց Ցեղասպանութեան մասին խօսք լինելու: Զիջողական քաղաքականութիւնը չարունակուեց թէ՛ Թուրքիայի եւ թէ Ադրբեջանի նկատմամբ եւ միշտ մի տասաներորդ ժամին, ժողովրդի պոռթկումով ու միջամտութեամբ կամ աշխարհաքաղաքական իրադարձութիւնների կտրուկ փոփոխութեան բերումով՝ կասեցուել է վնասակար արդիւնքը: Իսկ հիմա, աւելի քան երբեք, անհաւասար են դիրքերը: Ի՞նչ զգուշութեան մասին է խօսքը. բանակցութիւնների ու համաձայնագրերի ո՞ր հայանպաստ կէտն է խոստումների սահմանից անցել ու ամրագրուել: Երբեւէ կարելի՞ է զգուշութեամբ ետ բերել ահռելի կորուստը: Այսօրուայ վարչակարգի ու դրանց տեսադաշտում տեղաւորուած Հայաստանի ու Արցախի տեսլականի առկայութեամբ, ընդունելի տարբերակի մասին խօսելը երազականութիւն (utopia) է: Բնականոն պայմաններում, դրացիների միջեւ տարուող բանակցութիւնները պարզ է, որ պիտի լինեն հաւասար դիրքերից: Պատմութիւնը, մանաւանդ եղեռնական պատմութիւնը, չի մոռացւում ու մինչեւ հաշուեյարդար չլինի՝ հիւանդ իրավիճակի վրայ առողջ տեսլական հնարաւոր չէ կառուցել: Իսկ մինչ այդ, ներքին ու արտաքին քաղաքական լարուած պայմաններում ու այլ ներգործիչ ուժերի պարտադրող մասնակցութեամբ, որեւէ համաձայնութիւնից խուսափելը միակ ելքն է:

ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆ.- Այս տարի, առաւել քան երբեւէ, մեծ է հաւանականութիւնը, որ Միացեալ Նահանգների նախագահը կը ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը: ՀՀ իշխանութիւնների՝ Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականութիւնը արդեօք չի՞ ազդի ԱՄՆ նախագահի որոշման վրայ, հաշուի առնելով նաեւ Թուրքիայի կողմից Վաշինգտոնին ուղղուած ուղերձներն առ այն, որ Հայաստանի հետ տեղի են ունենում յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած քայլեր, եւ ցեղասպանութիւն բառի կիրառումը ԱՄՆ նախագահի կողմից կը նշանակի Կովկասում ընթացող ամբողջ գործընթացը նենգադուլի (սաբոտաժի) ենթարկել:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Թուրքիայի այս դիւանագիտութիւնը կրկնուել է ամէն տարի եւ միշտ էլ յաջողել է, որովհետեւ Հայաստանի իշխանութիւնները կուլ են տուել խայծը: Իմ կարծիքով, Թուրքիայի նետած այս խայծը ո՛չ թէ պատճառ է ԱՄՆի նախագահների հերթական «զգուշաւոր» կեցուածքի, այլ պատրուակ՝ արդարանալու համար, թէ ինչո՞ւ յարմար չէ նման բարենպաստ պայմաններում նոր լարուածութեան առիթ տալ: Պատրուակ է՝ ծածկելու ԱՄՆում տարուող քաղաքականութիւնը Թուրքիայի նկատմամբ ու Թուրքիայից ակնկալուող պետական ու մասնաւոր ռազմական, տնտեսական ու ռազմավարական շահերը: Այս տարի մի քիչ տարբեր է իրողութիւնը կապուած ո՛չ միայն նախագահ Բայդընի անձին ու որդեգրած խաղաղասիրական ու արդարամիտ քաղաքականութեան, այլ ռուս-Թուրք-ամերիկեան յարաբերութիւնների ոչ-սահուն ընթացքին, նաեւ՝ որպէս հակազդեցութիւն էրդողանի սանձարձակ գործունէութեան: Ուրեմն, նախորդ տարիների համեմատութեամբ, աւելի հաւանական է: Հայ Դատի յանձնախումբն էլ իր կարելին չի խնայել հարցի կարեւորութիւնը եւ ամերիկահայութեան ակնկալիքը նախագահին յիշեցելու: Ուրիշ հարց է՝ թէ ի՞նչ կը լինի ազդեցութիւնը եթէ Բայդընը աւանդական դարձած ապրիլեան ուղերձի մէջ այդ անիծէալ «ցեղասպանութիւն» բառը գործածի: Բացի ամերիկահայութեան մէջ ստեղծած ոգեւորութիւնից ու խանդավառութիւնից, երեւի էրդողանը մի քիչ էլ աւելի բարձր կը յոխորտայ: Դա արդեօք կը տանի՞ մեզ դէպի համաշխարհային, ներառեալ Թուրքիա, ճանաչման: Կասկածում եմ:

ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆ.- Հայաստանի իշխանութիւնների կողմից ներկայում իրականացուող հայ-թուրքական գործընթացները հակասում են Սփիւռքի, մասնաւորապէս՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործում երկարատեւ գործունէութիւն ծաւալած անհատների, կազմակերպութիւնների մեծամասնութեան դիրքորոշումներին: Այս դէպքում եւս պէտք է փաստենք, որ գործ ունենք թուրքական քաղաքականութեան հետ, որով մշտապէս փորձ է արուել սեպ խրել Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, քայքայել Սփիւռքը: Վերջերս էլ, արցախեան պատերազմի աւարտից յետոյ, Թուրքիայի խորհրդարանում լսումների ժամանակ, իշխող ուժի ներկայացուցիչը բարձրաձայնել էին Սփիւռքին ջախջախելու մտադրութեան մասին: Միեւնոյն ժամանակ, Սփիւռքը հաւաքական դիրքորոշում չի յայտնել ընթացող գործընթացների վերաբերեալ: Ինչո՞ւ: Ինչպէ՞ս պէտք է պայքարել թուրքական սպառնա-

→

«Հայը Թուրքի Համար Թշնամի է Ու Թշնամի էլ Կը Մնայ, Քանի Դեռ Գոյութիւն Ունի Հայաստանը՝ Մեծ Խոչընդոտ Թուրք Ազգայնական Նպատակների Ճամբին»

լիքի դէմ: Ի՞նչ ձեւերով պէտք է, օրինակ ամերիկահայ համայնքը ներգրաւուի թուրք-ադրբեջանական յարձակումների դէմ պայքարում, այդ թւում՝ տեղեկատուական պատերազմում:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Սփիւռքը քայքայել միշտ է փորձուել: Դա փորձեցին Խորհրդային իշխանութիւնները, փորձուեց անկախացումից յետոյ եւս: Սերմանուեց օտարում, անհանդուրժողականութիւն, նոյնիսկ ատելութիւն, մենք եւ դուքի դիրքաւորում: Սեպը խրուեց, որովհետեւ ներսի ու դրսի շատ ուժերի համար Սփիւռքը շատ ազգային էր, նրան առաջնորդող ուժը ազատ ու անկախ ու դեռ միացեալ Հայաստան էր պահանջում եւ սա անընդունելի էր հայ ժողովրդի ճակատագրի մէջ ներգործութիւն ունեցող որեւէ ուժի/պետութեան համար: Սփիւռք-հայրենիք յարաբերութիւնները ձեւական, հանիդիսական բնոյթից ու տնտեսական ներդրումներից այն կողմ չանցաւ: Այդ բոլորով հանդերձ, Սփիւռքը անվհատօրէն երբեք իր ներուժն ու կարելիութիւնները չզլացաւ հայրենիքին՝ իր քաղաքական, տնտեսական, գիտա-կրթական փորձը արհեստավարժ մակարդակով ներդնելու, իր քարոզչական մեքենան յօգուտ Հայաստանի շահերին ի գործ դնելու: Բոլորին պարզ է, թէ Ամերիկահայ համայնքը ինչպիսի անսակարկ փութով ու խորը մտահոգութեամբ միատեղ ու միասնական ասպարէզ նետուեց կարելին անելու, օգնութիւն հասցնելու վերջին պատերազմի օրօք: Բանակի սպառազինման ի խնդիր կատարուած գործնական ծրագրաւորման առաջարկները մերժուել էին. բայց նիւթական օգնութիւնը ընդունուեց. արդիւնքը՝ յուսախաբութիւն՝ ի տես չարաշահումների: Ընդունուեցին նաեւ սփիւռքահայ կամաւորներ զանազան մարզերում օգտակարութիւն ցոյց տալու, ճակատում կռուելու. արդիւնքը՝ յուսալքութիւն՝ ի տես անկազմակերպութեան, ռազմագիտական որոշակի, յստակ ծրագրի բացակայութեան: Հայաստանի իշխանութիւնները երբեք չգիտակցեցին Սփիւռքի հսկայական ներուժը եւ Հայաստան-Սփիւռք համագործակցութեան անպարտելի ուժը: Թշնամին գիտակցել է եւ թիրախաւորել է Սփիւռքը: Հայաստանի իշխանութիւնների հետ դիւրին է լեզու գտնել, արգելքը Սփիւռքի քաղաքական ուժերն են: Ո՞ւր է հայու արժանապատուութիւնը:

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.- Դուք հսկայական ներդրում ունէք Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործում: Ինչպէ՞ս էք գնահատում վերջին երեք տարիների միջազգային ճանաչման ընթացքը, Հայաստանի իշխանութիւնների քայլերն այս ուղղութեամբ: Արդեօք ճանաչումը եւ պահանջատիրութիւնը շարունակո՞ւմ են առանցքային լինել Հայաստանի եւ Սփիւռքի համար: Քաղաքականից իրաւական դաշտ տեղափոխելու հարցում քայլեր արուե՞լ են:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին միջազգային ճանաչման համար տարուող պայքարը իր գագաթնակէտին հասաւ: Մի պահ, ինչպէս Ղարաբաղեան շարժման սկզբնական շրջանին, Սփիւռք-հայրենիք բոունցքները միացան: «Ցիշում եմ եւ Պահանջում» կարգախօսը ընկալուեց որպէս գործելակերպ, որպէս օրակարգ ու գործունէութեան ուղեգիծ: Եղաւ որոշ յառաջընթաց, նոյնիսկ Թուրքիայում: Դա այն ժամանակ էր երբ, ի տես Թուրքիայի այլախոհական շարժումներին, կարդալով Թուրք լուսամիտ ու յառաջատար մտաւորականութեան քննական վերաբերմունքի մասին՝ հանդէպ երկրում պարտադրուած մէկ ու միակ ազգային-կրօնական ինքնութեան, հանդէպ ուսուցուող նախա-հանրապետական շրջանի պատմութեան, տեսնելով նրանց պայքարը ժողովրդավար երկիր ունենալու, անցեալի հետ հաշուի նստելու, ես համոզուած էի, որ Թուրքիան ներսից պիտի փոխուի եւ այդ յառաջատար տարրն է, որ պիտի պարտադրի իշխանութեանը «հաշուի նստել անցեալի հետ», իմ ընկալմամբ, ընդունել հայութեան դէմ կատարուածը իր անունով, որ է ցեղասպանութիւն: Բայց Էրդողանի երկաթէ բոունցքը իջաւ երկրի այլախոհ մտաւորականութեան վրայ՝ սպառնալիք, ձերբակալութիւն, բանտարկութիւն, սպանութիւններ: Թուրքիայի այլախոհ ձայնը լռեց: Բոնապետութեան կապանքները աւելի սեղմուեցին: Իսկ Հայաստանո՞ւմ (2016ին, Ապրիլ 24ին նուիրուած «Ասպարէզ»ի բացառիկում ստորագրածս յօդուածում մտահոգութիւնս էի յայտնել, որ մարել է հարիւրամեակի առթած ոգեւորութիւնը նախքան յստակօրէն ուղղորդուած համահայկական ռազմավարութեան վերածուելը): Հայաստանի առօրեայում չիջաւ ոգեւորութիւնը: Ժամանակի իշխանութեան ստեղծած անարդար ու կեղեքիչ մթնոլորտում, առօրեայ հոգսերը մոռացնել տուեցին ապագայի մեծ երազը: Շիջաւ՝ մի անգամ եւս բոցավառուելու երբ Ադրբեջանը յարձակում գործեց՝ Արցախը իր կազմի մէջ ետ բերելու նպատակով: Իսկ վերջին երեք տարիներում, ձեւական դրսեւորումներից



→